

կիշ յօդերու վրայ դրուելով՝ կը ցուցնէ նոցա անհատականութիւնն. ինչպէս մարդ ձայնած ժամանակնիս մարդոց գաղափարը կը ներկայանայ մեր մտաց առջեւ, իսկ մարդ ոմն հնչած աստեղնիս՝ մարդոց իրականութիւնը կամ անհատականը կը հասկընաիք. այսպէս նաև ժառ՝ առանց յօդի կը յայտնէ ընդհանրաբար ժառի գաղափարը, իսկ ժառ իմն՝ մասնական ժառ անհատի իրականութիւնը, և այլն: (Հմմտ. Երեմիայի մէջ մը յօդն. աստիճ մը, մարդ մը, և այլն, թէ՛ շնչաւորի և թէ՛ անշնչի համար զործածուած իբր միակ յօդ):

Ք.

Ինչպէս վերը մէջ բերածներէն տեսնուեցաւ՝ ուրումն և ուսման հոյովները չեն պատճառ, ինչպէս կը կարծէ Պրոֆ. Մէյէ, որով մենք ոմն (ո-մն) բաղադրեալ կը համարինք. քանի որ մանաւանդ այդ հոյովներն նոյն իսկ ո-մնի կանոնաւոր կերպով կազմուած սեռական և տրական հոյովներն են: Եւ իրարի, պարզ ոչ սեռականի է ոյր և տրականն է ում, որոնց վրայ աւելցուած է մն զուգադրութիւնն: Եւ որովհետեւ ոյր և ում բաղաձայն տառերով վերջաւորուած են, ուստի աւ և Ե բառակապ ձայնաւորներով մնի հետ միացած եղած են ոյր-ու-մն, ում-Ե-մն. և ըստ կանոնի ձայնաւորաց փոփոխման՝ ոյր վանկին վրայ յաւելուած վանկ զայլով՝ ոյր-ու-մն ձևն եղած է ուր-ու-մն. (Հմմտ. լոյս, լուսոյ, կոյր, կոյրի. բոյր, բուրումն, և այլն): — Ըստ այսմ կերպի կազմուած են նաև նրբ-Ե-մն, ուր-Ե-մն, ուստ-Ե-մն, ուր-Ե-ք, ուստ-Ե-ք, նրբ-Ե-ք (Հմմտ. ի-մն, ի-ք, ո-մն, ո-ք):

Ուրեմն, ինչպէս ըսածնէս տեսնուեցաւ,

բառն աստեղ մը ամփոփուած եղած էր մն, միշտ յետադառ, այսպէս. Սակաւմն քացախ. ամ. ասմն ճանապարհ.... Ըսածներէն յայտնի կը տեսնուի որ հիմակուան մըն (հնց միև և մն) յօդը՝ դրբ. ի-մնէն յառաջ եկած չէ ու (Այստե՛սեան. քննակ, քեր. Մասն Բ. էջ 25):

ուրումն և ուսման ձևերն վերլուծաբար չի նուած չեն իրիք և իմիք ձևերէն: Իսկ այս վերջիններս ուրիշ բան չեն, բայց եթէ իք ձևին օրինաւոր կերպով շինուած սեռական և տրական հոյովներն. ըստ հայկական լեզուի բ լինելով նշանակիչ սեռականի (Հմմտ. անձին կարօտելոյր, մարդոյր, ճիւղոյր, սեռոյր, Սովորատոյր. նաև զբանուանքն ոյր, էր, ուրումն, ուրուք, նորա, այնր, սորիմ), և մ նշանակիչ տրականի (Հմմտ. մարդոմ, սրբոմ, նորոմ, հնոմ, առաջնոմ, միտմ, քոմ, էրոմ, ում, ուսման, ումնք, նմա, այնմ, սմիմ). որով եղբեր են սեռ. իր, տրակ. իմ, որոնք ի բառակապ ձայնաւորով միացեր են ուղղականին քին հետ, լինելով իր-ի-ք, իմ-ի-ք. իսկ բացառականին մէջ վանկ մ'աւելնալուն պատճառաւ՝ յիմնք (փխնկ. յիմիք):

Բանասէր

ՀԱՄԱՌՈՏ ԿԵՆՍԱԳԻՐ

ՄԱՆ ԹԱՇ Ե ԱՆ ԱՂ Ե ԲՍԱՆ ԴՐԻ

 ԲԻՅՑՈՍ՝ քարիւղի վաճառականաց մէջէն ամենէն մեծը և ամենէն նշանաւորը Մանթաշօֆ կամ Մանթաշեանց հոշականուն առասպալն է: Ի Գահիրէ, ի Բորդ-Սայիտ, ի Տա, միէդ և յԱղեքաւանդերի ունի իւր յատուկ տուններն ու գործակատարները, որոնք՝ բաց ի Բորդ-Սայիտի գործակատարէն՝ որ յոյն է, առ հասարակ ամենը հայազգի են. նմա, նապէս երկրորդական պաշտօնեայք՝ եթէ ոչ առ հասարակ՝ զոնեայ մեծաւ մասամբ հայազգի են. վասն զի Մանթաշեանցին սկզբունքն է նախ իւր ազգայնոց օգնել:

Բայց թէ ով ոք է Մանթաշեանց Աղեք-

սանդր, ահաւասիկ մէկ քանի փոքր տեղեկութիւնք որ կարող եղայ ստանալ:

Աղեքսանդր Մանթաշեանց ուսաւհայն ծննդ է ի Տփլիս, ուր և հաստատած է իւր բնակութիւնը, և է շուրջ յիսունուհինգ տարեկան ունի: Իւր դաստիարակութիւնն առած է Տփլիսու դպրոցաց մէջ, և է ազ նուասիրտ, բարեկիրթ և զուարթալէմ ունի. բերանը միշտ ի ժպիտ պատրաստ՝ կը յայտնէ իւր բնութեան մեծանձնութիւնը ու սրտին բարութիւնը:

Ի սկզբան՝ վաճառականութեան հետաժուտ՝ իւր առեւտրայ նիւթ էին լաթեղէնք, զորոք Անգղիայէն բերել կու տար: Թուի թէ այն նիւթոց տուրեստական գործերը այնչափ յաջող ելը չունէին, երբ յանկարծ Բաքուի քարիւղի աղբիւրներն երեւան ելան: Մանթաշեանց Աղեքսանդր՝ մտացի, խոհուն և առեւտրական գործոց լաւ հասկցող, իսկոյն հասու եղաւ թէ որչափ օգուտ կընար քաղել այն վաճառականութեան նորադիւտ հնգանիւթէն, և որչափ ընդարձակ ասպարիզ կը բանային իւր առջև Բաքուի քարիւղի հանքերը: Առանց երկմտելու թողուց իսկոյն իւր առաջին ձեռնարկած վաճառականութիւնը ու առեւտ ինքզինքը բոլորովին քարիւղի վաճառականութեան: Փորձունեայ և արի ձեռնարկող՝ յաջողեցաւ Բաքուի գաւառին նաւթի ու քարիւղի հանքաց ընդարձակածաւալ տեղերու տիրանալ, և հոն կանգնած գործարանաց մէջ քարիւղը գտելու նորանոր մեքենաներ մտցընել: Փուցէ ունայն է յիշելը թէ այն բազմաթիւ գործարանաց մէջ հապարաւոր մարդիկ իրենց կենաց տպոււտը կը ճարեն այս մեծ վաճառականիս հոգեւտուրութեան ներքեւ, որք և մեծաւ մասամբ հայազգիք են:

Մանթաշեանց Աղեքսանդր իւր գործարաններէն ելած քարիւղ՝ բաց ի Ռուսաստանի ընդարձակ աշխարհէն՝ կ'ուղարկէ ի Հնդկաստան, ի Չինաստան, ի Ճաբոն և այլ և այլ մեծ կղզիները, յեգիպտոս, ընդհանուր Օսմանեան պետութեան երկիրները, ի Չվիւռնիա, ի Թեւազդոնիկ և այլն: Ի Ռոսարս ունի իւր յատուկ վաճառականութեան տունը, և ի Տփլիս՝ վաճառականական դրա-

մասեղանն (*Banque commerciale*) իրեն յատուկ ինչք է:

Գրեթէ տասնուհինգ տարի կայ քանի որ Մանթաշեանց Աղեքսանդր ձեռնարկած է քարիւղի վաճառականութեան, որ այժմ բազմաթիւ ձեւեր բաժնուած ըլլալով՝ յայտնի է թէ մեծապէս ալ արդիւնաբեր է. ուստի և կ'ըսեն թէ Մանթաշեանց Աղեքսանդր ձուխութեամբ՝ կողկասեան նոյնից մէջն առաջինն է, և է զլիաւոր անգամ Բաքուի քարիւղի հոգաբարձու ընկերութեան: Ինքնամուսնացեալ է և է հայր ութ զաւակաց:

Ի Տփլիս Մանդաշեանցին ազգեցութիւնը և ունեցած վարկը այն աստիճանի է, որ հասարակաց գործի մը ձեռք չեն զարներ, առանց կանխաւ իրմէն խորհուրդ հարցնելու և իւր հաւանութիւնն առնելու:

Սակայն Մանթաշեանց Աղեքսանդրի զարմանալին են որքա՞ն ազնուութիւնը, մեծանձնոգին և բարեգործական տենչը. և ի վերայ ա՛մնային առաքինի բնաւորութիւնը: Աւետարանական պատգմութիւնն՝ կրնանք ըսել՝ հաւատարիմ հետեւող, որ կ'ըսէ — «Ի՞նչ քիտացէ ձախ քո զինչ գործէ ալ քո», — իր անթիւ բարեարութեանց մէջ մեծապէս վրէժնիւղի է որ գաղտնի ձեռն ու ոչ ոք խօսի անոնց վրան: Ճշմարիտ բարեբար իւր ազգայնոց, ուր դաստիարակութեան խնամոց պէտք կայ՝ չնայելով դրամոյ. որչափ ձեռքէն կու գայ՝ կը փութայ օգնել ուշիմ և ուսումասէր երիտասարդութեան: Բազմաթիւ են այն հայ՝ տղայք զորոք իւր ծախիւք այլ և այլ դպրոցաց մէջ դաստիարակել կու տայ. և զլիաւորապէս քսանի չափ հայ երիտասարդք նախ Ռուսիոյ և ապա Եւրոպայի համալսարանաց մէջ կը պահէ, աւելով անոնց բաց ի նիւթական ապրուստէն՝ նա և այն ամենայն միջոցներն, որ կարելուք են իրենց ուսումական գաստիարակութեան կատարելագործութեանը: Աւելորդ է գուցէ ըսել թէ այսպիսի բարեբար մարդու մը՝ չկայ ոք ճշմարտապէս կարօտ որ զիմէ և առանց օժանդակութիւն մը ընդունելու մեկնի: — Աղեքսանդր Մանթաշեանց է եւս անգամ Տփլիսու բարեգործական ընկերութեան:

Պարկեշտաբար ստորագրելով այսպիսի ուն-

Ք Մանթաշեանց Աղեքսանդր, որու բարերա-
րութիւնը անմահ յիշատակ և պարծանք
պիտի մնան, և միանգամայն օրինակ բարի
ապագայ հայ սերունդին. իցիւ թէ և որդիք
իրենց մեծանձն հօրը հետոցը հետեին:

ՄՈՒԹԱՖԵԱՆՑ ՅՈՎՀԱՆԵՍ

Արդ զառնալով առ մեր գրութեան նիւթ,
յեղիպտոս՝ Մանթաշեանց քարիւղի վաճա-
ռականութեան գլխաւոր տեղին կամ կեդ-
րոնն է յԱղեքսանդրիա: Այս տեղւոյս Ման-
թաշեանց տան ներկայացուցիչն է Պարոն,
Յովհաննէս Մովսէփեանց որ ծնեալ է
յԱխլիսիա, և գրեթէ հինգ տարի է ի վեր իւր
ընտանեօք կը բնակէ ի քաղաքս:

Պարոն Յովհաննէս Մովսէփեանց՝ է նախ-
կին աշակերտ Լազարեան ճեմարանին, որ
աւարտեց իւր ուսումը ի 1872, և 1873
գնաց Գերմանիա, և հոն մինչեւ ց1878 հա-
մալսարանները զբաղեցաւ իւր ուսումնական
կրթութիւնը կատարելագործելու: Անկէ ետքը
անցաւ ի Սորպոնն փարիզու ուր զադաբե-
ցաւ մինչեւ ց1879, և նոյն տարին դարձաւ
յԱխլիսիա իւր հայրենիքը: Հոն 1880ին
ընտրուեցաւ շահապ կամ քաղաքատեսչու-
թեան գլխաւոր (*chef de municipalité*), և
այն պաշտօնին մէջ շարունակեց մինչեւ
ց1884: Այնքան գոհացուցիչ մատակարա-
րութեամբ վարեց իւր պաշտօնը որ քառա-
մեայ ընթացքը լրանալէն յետոյ, զարձեալ
հաստատուեցաւ իւր պաշտամանը մէջ և մնաց
իբր քաղաքագլուխ կամ շահապ մինչեւ
ց1890:

Այնուհետեւ Յովհ. Մովսէփեանցին առ-
ջեւ ուրիշ ասպարէզ մը բացուեցաւ. Ման-
թաշեան առաւ զինքը քովը իբր գործակա-
տար իւր քարիւղի վաճառականութեան, և
այնու տիպաւորով զրկեց զինքը որ շրջի

և այցելէ բոլոր այն տեղեաց՝ ուր կային Ման-
թաշեանց գործակալութիւնները: Ի 1892
եկաւ ու հաստատուեցաւ յԱղեքսանդրիա Ե-
գիպտոսի իբր ընդհանուր գործակատար և
ներկայացուցիչ Մանթաշեանցի:

ՅԱղեքսանդրիա Պարոն Մովսէփեանց
ազգայնոց ընտրելագործներէն մին է, թէ իւր
ազնուութեամբը, թէ հանճարովիք, թէ ծառ-
րաբարդութեամբը և թէ ուսումնական
կրթութեամբը, իրաւամբ կը վայելէ բոլոր
հայ հասարակութեան համակրութիւնն ու
համարումը. անոր համար ալ զինքը ընտրած
են թաղական խորհրդոյն անգամ, և է աբ-
դարեւ գլխաւոր և ընտիր անդամներէն մին:

Ի 1887 տարւոյն ամուսնացած է և այսօր
երեք զաւակաց. հայր:

Երբ Աղեքսանդր Գ. Ռուսաց կայսրն դէպ
ի կովկաս ճանապարհորդեց, Պարոն Մով-
սէփեանց ներկայացաւ կայսր և անկէ պա-
տուեցաւ Ստանիսլաւ շքանշանով, իբր ի
փոխարէն իւր անխնայ վաստակոց:

Նոյն իսկ Ախլիսիայի դպրոցաց հոգա-
բարձու եղած է, և է եւս մին ի հիմնա-
դրաց կովկասի Հայոց բարեգործական ըն-
կերութեան՝ Ախլիսիայի բաժնին, որուն շա-
րունակեց ըլլալ վարչութեան անգամ մինչեւ
իւր Ախլիսիայէն մեկնելուն օրը: Իսկ Աղեք-
սանդրիոյ մէջ է գանձապետ Աղքատախնամ
ընկերութեան:

Խօսքերնիս կնքելով, կրնանք ըսել որ
Մանթաշեանց Աղեքսանդրը ասկէ ընտրեալ-
գոյն անձ մը չէր կրնար իւր ներկայացու-
ցիչ կարգել Եգիպտոսի մէջ*:

* Եր ցաւինք որ այս երկու անձանց կենդա-
նագիրը ձեռքերնիս չհասաւ, որ կարենայինք
բերելն միջոցաւ ընթերցողաց ընծայել:

